



Միսաք Մեծարեւնց

Ջուրէն դարձին

Երբ բլուրն ի վար
աղբիւրէն դարձին,
իր վարսքի խտրձին
մէջը սողոսկի
նուրբ մատիկն ոսկի
արեւի լոյսին.
հիր սափորն ուսին
երբ բլուրն ի վար
աղբիւրէն դարձին,
մեղմով ծածանի
լաշակն հողմավար՝
թեով թռչունի.
ու ծիածանի
թոյրով պսպրդայ
աչքն իր գեղանի.
եւ երբոր ցնծայ
հնչիւնը՝ ծնծղայ
գարդոսկիներուն.
տենչանքով անհուն
հոգիս պիտ' ըղձայ
գանձեր՝ գոր չունի:
Ծարաւ շիղին պէս
պիտ' ըղձայ անի,

երկու կաթիլ ջուր
շուրթերուն իր կէզ:
Եւ իր ճակատին՝
գովացքը ցրտին,
ճակատին կըրակ՝
գովացքը ցրտին,
կարմիր սափորի
ջուրին սառնորակ
ցօղովը բերրի՝
կակաչ ձեռքերու...:
Ա՛հ, այս իրիկուն
սափորն իր ուսին
աղբիւրէն դարձին՝
սիրոյս անանուն
ջերմ սարսուտներով
կը դողայ սօսին...: